

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ իմանալ զբանս հանճարոյ...»:

(Առակաց Ա:1)

Մեսրոպ Մաշտոցի աշակերտ եւ կենսագիր՝ Կորիւնի վկայութեամբ, առաջին հայերէն թարգմանուած տողն է այս՝ գրուած Մեսրոպի սուրբ մատեներով:

Պատմիչներու վկայութեամբ, թէեւ Քրիստոնէութիւնը Հայոց մէջ քարոզուեցաւ յունարէն կամ ասորերէն գրականութեամբ, սակայն, ըստ էութեան զուգահեռ (յընթացս) թարգմանութեամբ՝ դարձաւ պետական կրօն, սակայն հաստատուեցաւ ժողովուրդի մէջ հայ գիր ու գրականութեամբ:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց եւ Սուրբ Սահակ Պարթեւ իրենց շուրջ համախմբուածներու հետ մէկտեղ, կարճ ժամանակի ընթացքին ըրին անհրաժեշտ առաւելագոյնը եւ թարգմանեցին Գիրքերու Գիրք «Աստուածաշունչը», որը բնագրային հարազատութեան, թարգմանութեան ճշգրտութեան եւ լեզուի համար կուշուած է «թագուհի թարգմանութեանց»: «Աստուածաշունչ»-ին կը յաջորդէ գործնական պահանջը ունեցող ծիսական, կրօնա-դաւանաբանական գրականութեան թարգմանութիւնը՝ կանոններ, թուղթեր, քարոզներ, ներբողներ, վարքեր, որոնք համապատասխանաբար ի մի բերուած են «Վարք Սրբոց», «Ճառքնտիր», «Յայսմաւուրք» ժողովածուներու մէջ:

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին գնահատելով Թարգմանիչ վարդապետներու կատարած տիտանական աշխատանքը՝ նուիրագործած է մտքի այդ մեծ առաջնորդները եւ անոնց յիշատակին սահմանած է Սրբոց Թարգմանչաց տօնը:

Հայերէն թարգմանուած առաջին գրքին՝ Աստուածաշունչին ընթերցումը իւրաքանչիւրիս կրնայ պահ մը վերացնել աշխարհի առօրեայ միջավայրէն, հոգսերէն ու խնդիրներէն: Հոգիի փրկութեան համար իբր սպեղանի թելադրուող այս գիրքին բովանդակութիւնը մեզմէ շատերու համար հաճելի ընթերցանութեան առիթ է: Անոր բազմաբնոյթ գրութիւնները, մարդոց ընթերցումի տարբեր ճաշակները գոհացնելու հնարաւորութիւնը ունին, եւ անօթի չեն թողուր անոր մօտեցող աստուածավախ մարդը:

Զանազան դարաշրջաններուն գրուած ըլլալով, երկար դարերու մարդկային փորձառութիւն կը պարունակէ Աստուածաշունչը, մարդկային կեանքին մէջ յատուկ կերպով ընդգծելով Աստուծոյ ցոյց տուած ճամբան՝ Անոր առաջնորդութիւնը, սայթաքող մարդուն փրկութիւնը ապահովելու ի խնդիր: Այնտեղ Աստուած միայն վերջնական փրկութեան հետամուտ չէ, այլ նաեւ այս աշխարհի վրայ ապրած միջոցին, մարդուն ուղեցոյցն է, որպէսզի ան ապրի այս կեանքը, այնպէս ինչպէս հաճելի պիտի ըլլայ իր Արարչին: Իսկ այդ ուղղութենէն դուրս մնալ՝ կը նշանակէ մեղանչել Անոր դէմ:

Անցեալին երբ ընթերցանութիւնը այնքան ալ տարածում չունէր եւ գրաճանաչ մարդիկ աւելի նուազ էին թուով, ու մանաւանդ այն օրերուն երբ Աստուածաշունչի մեկնաբանութիւնը միայն Եկեղեցւոյ «առանձնաշնորհ»-ն էր, յատուկ անձեր միայն կը կարդային Սուրբ Գիրքը՝ ի լուր հաւատացեալներու: Սակայն, երբ ուսումն ու գիտութիւնը ամէնուն սեփականութիւնը դարձաւ, գիրն ու դպրութիւնը տարածուեցաւ, դպրոցներ բացուեցան ամէնուրեք, հաւատացեալ անհատը ինք սկսաւ կարդալ հոգե-

կան գանձարան այս մատեանը:

Կը պատմուի, թէ հաւատացեալ մէկը, որ պարագաներու բերումով իր ընտանիքի անդամներուն հետ գժտուած էր, կը դիմէ գիւղի քահանային՝ անկէ խրատուելու: Քահանան, խորհրդալից ձայնով կը պատուիրէ անոր Սուրբ Գիրքը կարդալ: Հաւատացեալը թէպէտ գիտակից իր գործած յանցանքին, համարձակութիւն կ'ունենայ գոհունակութեամբ ըսելու, թէ քանի՛ անգամներ ծայրէ ի ծայր կարդացած է զայն: Քահանան սակայն կ'ըսէ անոր.

- Կարդացա՞ծ ես, դարձեալ կարդայ:

Հաւատացեալը չմերժելու համար իր հոգեւոր հովիւը, կ'երթայ պատուէրը գործադրելու: Որոշ ժամանակ ետք երբ կը վերադառնայ քահանային, աւելի մեծ գոհունակութեամբ ու հանդարտած խիղճով ըսելու թէ դարձեալ կարդացած է զայն, քահանան կը կանխէ զինքը, ու կողով մը տալով կը խնդրէ որ երթայ ու աղբիւրէն ջուր բերէ իրեն: Հաւատացեալը առանց վարանելու, շիւղերով հիւսած զամբիւղը առած կ'ուղղուի դէպի աղբիւրը: Հոսուն ակին տակ կողովը բաւական բռնելէ ետք, երբ կը տեսնէ թէ ոչ մէկ կաթիլ կը մնայ անոր մէջ, թրջուած կողովը բռնած կը վերադառնայ քահանային եւ խեղճացած հոգիով կ'ըսէ թէ անկարելի է անով ջուր փոխադրել:

Քահանան այն ատեն կ'ըսէ, թէ պէտք չէ յուսահատիլ: Եւ կ'աւելցնէ ըսելով, թէ այն ջուրը որ այդ կողովին մէջ լեցուեցաւ ու պարպուեցաւ, մաքրեց կողովը իր աղտեղութենէն, փոշիէն, շուկայէն գնուած բանջարեղէններու մնացորդներէն, պտուղներու տերեւներէն, շիւղերէն ու անոնցմէ ինկած միջատներէն:

Մեր հոգին եւս այդ կողովին կը նմանի: Ինչպիսի՜ «գնումներ» կը կատարուին օրական եւ կը մտնեն ու կ'ելլեն այդ «զամբիւղ»-ին մէջ: Ամէնքս ալ գիտենք, որ կեանքի շուկաներու մէջ վաճառուող ամէն ինչ թարմ ու վստահելի չէ: Այնտեղ երբեմն կան նաեւ փտած ու մզլոտած պտուղ ու բանջարեղէն, մսեղէն թէ ընդեղէն: Եւ այդ բոլորը երբեմն մեր կեանքէն անկախաբար կը մտնեն մեր «կողով»-ին, այսինքն հոգիին մէջ, որ ժամանակ առ ժամանակ լուացումի ու մաքրութեան կարիքը ունի:

Հետեւաբար, Աստուածաշունչն է մարդկային հոգին մաքրող ու լուացող միակ «ջուր»-ը, կենսատու Զուրը, որուն աղբիւրը Աստուած Ինք է, եւ զայն մեզի կը բաշխէ իր միածին Որդիին միջոցաւ: Բնաւ բաւարար չէ ըսել՝ «կարդացած եմ Աստուածաշունչը», քանի որ Զուրը կեանքի խորհրդանիշ է, իսկ Աստուածաշունչի «ջուր»-ը, մարդկային հոգին լուացող միակ միջոցը, որուն տուած լուացման կրկնութիւնը աւելի ո՛վ պիտի փայլեցնէ ներքին մարդը, Աստուծոյ պատկերին նմանութիւնը գծելով նաեւ անոր արտաքին տեսքին վրայ: Ուրեմն, եթէ Աստուածաշունչը կարդացած ես, դարձեալ կարդայ, առանց ձանձրանալու եւ առանց տրտնջալու, որպէսզի մաքուր հոգիով կարողանաս փառաւորել Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին. յաւիտեանս, յաւիտենից:

ՆԵՐՍԵՍ ԱՔԴ. ԱԼՈՅԵԱՆ